

որպէս զի ըստ այնմ լուծումն ստանան այդ խնդիրները եւ դադարեն դամոկլեան սրի նման մեր զլիւն կախուած լինելուց: Անշուշտ չը պէտք է մոռանալ, որ Արարատի յաջողութիւնը ինչպէս եւ այդ խնդիրների լուծումը կախուած է աշխատակիցների թուից ու եռանդից, եւ մենք յոյս ունինք, որ մեր հողեւոր դպրոցների ուսուցչական խմբերն ու հոգեւորականները արձագանք կը տան խմբագրութեանս հրաւերին եւ կաշխատեն իրենց զրական աշխատանքով աջակցել իրենց չտիանաս կրօնական — զրական ամսաթերթին, մանաւանդ որ մեր ամսագրերի թիւը ուղղակի ողբալի է, իսկ ընթերցողներինը՝ աննշան:



ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵՒ ՄԵՐ ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆԸ

Նրանի ողորմածաց, զի չեքա ողորմութիւն գտցին:

Աւետ. Մատթեոսի զլ. ե. 7—8:

Զգեցարուք այսուհետեւ իբրեւ ընտրեալք Աստուծոյ՝ սուրբք և սիրեցեալք, զգուծ, գողորմութիւն, գքազցրութիւն, գխոնարհութիւն, զհեզութիւն, գերկայնմտութիւն, ներկէ միմեանց, չնորհել իրերաց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ, որպէս Աստուած Քրիստոսիւ չնորհաց ձեզ, նոյնպէս և զուք:

Կողոսացուց ք. զլ. գ. 12:

ՍԻՐՈՅ արտայայտութեան ամենագլխաւոր ապացոյցներից մինը, ինչպէս գիտենք, գոյքի մասնագրութիւնն է երբ բոլորովին կարիք չկայ անձնագոհութեան: Մենք մէկի ունեցած սէրը դէպի ընտանիքը, դէպի իւր զաւակներն ու մերձաւորները ժամանակակից հասկացողութեամբ

չափում ենք նրանով, թէ սիրող անձը ինչ չափով է նրանց մասնակից անում իւր աշխատանքի պատուներին, ինչով և ինչ միջոցներով է արտայայտում իւր կապը նրանց հետ և նպաստում նրանց բազդաւորութիւն կոչուած բանին։

Մեզանում երբ ուզում են ասել, որ այս ինչը բազդաւոր է, սխալում են հաշուել ծառաներն ու աղախինները, խոհարարների արուեստն ու արտադրութիւնը, սեղանն ու խորտիկները, հագուստներն ու զարդերը, բնակարանն ու կարասիք, ձիաներն ու կառքերը և այլն և այլն։ «Բազդաւորը Շամիրամն է, տեսէք ինչպէս է ապրում, քանի ծառայ ու աղախին ունի, ինչպիսի տուն ու զարդարանք ունի, ինչպէս սիրուն ու պծնուած է ման ածում իւր դաւակներին, կառքից ոտքը դետին չի դնում, այ, նա թող ամուսնով պարծենայ, սիրելն այ այդպէս կլինի ելն, ևլն»։

Բնական է, որ թէ կինը և թէ զաւակներն հէնց այդ ձևով էլ սովորում, պահանջում են սիրոյ արտայայտութիւնը և թէև ոչ բոլորովին, բայց որոշ չափով այդ ճշմարիտ է։ Եթէ ես սիրում եմ մէկին, նրա համար ոչ թէ ունեցածս, այլ և կեանքս չըպիտի խնայեմ, այո, հէնց այդպէս է արտայայտում սիրոյ զգացումը։ Զիշտ այդպէս էլ ընդունում էր Փրկիչը սիրոյ զգացմունքը թէ դէպի իրեն և թէ դէպի գաղափարը, այլապէս նա ոչ սքի չէր ընտրում իրեն աշակերտ և իւր քարոզած ամենափսեմ՝ գաղափարների առաքեալ, Յիշենք Փրկչի պատուէրը մեծատուն երիտասարդին, որն ամենայն ճշտութեամբ կատարել էր մովսիսական բոլոր պատուիրանները, կատարել էր այնպէս ինչպէս շատ շատերը փարիսեցիներից, բայց դա շատ մասնաւոր բան էր, շատ չնչին՝ յաւիտենական կեանք ժառանգելու և ահա Փրկիչը նրան հրամայում է. «Եթէ կամիս կատարեալ լինել, երթ, դոր ինչ ունիս վաճառեա և տուր աղքատաց, և ունիցիս դանձս յերկինս, և առ ըզխաչն, և եկ զկնի իմ։ Եւ նա խոթուեաց ընդ բանն՝ գնաց արտում, զի ունէր ինչս բազումս» (Մարկ. դ. Ժ. 21—23)։ Գաղափարի զինուորութեան, երկնքի արքայութեան հասնելու համար պահանջում է, որ մարդս ամենայն ինչ զոհէ,

ամեն բան մտանայ յանուն այդ գաղափարի։ Որպէս ապացոյց գաղափարի զինուորութեան, Փրկիչը պահանջում էր, որ մենք երկնային դանձի, յախտենական կեանքի համար աւելի մտածենք և աշխատենք, քան երկրայինի համար։ «Զի ուր գանձք ձեր են, անդ և սիրտք ձեր եղիցին», և սա մի անուրանալի, անվիճելի ճշմարտութիւն էր և կրկնում ենք— իբրև նշան իրեն հետևողներին գաղափարապաշտութեան ամենից առաջ պահանջում էր ողորմածութիւն, պահանջում էր վաճառել ունեցած չունեցածը և տալ աղքատներին, ուրիշ խօսքով սեփականութեան գաղափարից խուսափել, Աստուծոյ ծառայելիս՝ չը ծառայել մամանայի, որովհետև այդ երկուսը միաժամանակ և միասին անստորագրելի են։ Քրիստոնէութեան առաջնակարգ և զլխաւոր պահանջներից մէկն է ողորմածութիւնը, որ կարող է արտայայտուել զանազանակերպ և ծառայել որպէս սիրոյ ապացոյց։

Ապացինք, որ աշխարհս սեփականութեան, աշխատանքի և նրա արդեանց մասնադրութեան չափով է կըշռում՝ ժարգուս սէրը դէպի մերձաւորները, որոնց նա մասնադրում է այդ աշխատանքը։ Բայց տարաբաղդաբար միանգամայն սխալ է մեր այդպիսի դատողութիւնը։ Եւ ահա թէ ինչո՞ւ։ Երբ մէկը տմեն կերպ աշխատում է իւր ընտանիքի և իւր զաւակների շռայլութեան, փարթամութեան և ճոխ ապրուստի համար, դեռ այդ ապացոյց չէ նրա սիրոյ։ Դեռ հարց է դրանով նա ո՞ւմն է աւելի սիրում, իրեն թէ չըջապատողներին։ Կարծում ենք, որ նա աւելի իրեն է սիրում, որովհետև նա եթէ չըզգար նրանց գոյութեան կտրիքը իւր երջանկութեան համար, եթէ նա փոխադարձ աւելի մեծ չափով չըստանար նրանցից իրեն տուածը կամ ստանալու յոյս չունենար, հազիւ թէ յանձն առնէր նրանց համար նոյն իսկ մի շաբաթուայ աշխատանք։ Բայց իրեն զգացած եսական կտրիքը, անձնասիրութիւնը, հասարակական կարծիքն և բազմաթիւ այլ հանգամանքներ ստիպում են նրան այդպէս անել և ոչ թէ սէրը՝ բառիս ամենախոնկական մտքով։

Պարզ է ուրեմն, որ մենք, որպէս Աւետարանի աշակերտներ և քրիստոնեաներ պարտաւոր ենք ողորմած լինել, պարտաւոր ենք գանձել մեր գանձը երկնքում, մասնաւոր չափութեամբ և այն չըշինել մեր կեանքի նպատակն ու հոգսը: Ողորմածութիւնը, կամ Աւետարանի իսկական մտքով սեփականութիւնից հրաժարուելու և հասարակաց դարձնելու տրամադրութիւնն ու պատրաստակամութիւնը միայն համարուում է ճիշտ յայտարար մեր անկեղծութեան, գաղափարապաշտութեան և սիրոյ ու գոհութեան և սա աստիճանների, չափ և ուղիքների:

Մենք էլ քրիստոնեայ ենք և հետևապէս պարտաւոր ողորմած լինելու: Բայց մի փոքրիկ ակնարկ ձգենք, թէ ինչպէս ենք կատարում մեր ողորմածութիւնը: Պէտք է ասել, որ ինչպէս քրիստոնէական ուրիշ պարտականութիւնների, այնպէս և ողորմածութեան գաղափարը վաղուց խռովել է մեղանից: Մենք ի թիւս այլ հասարակական և ընկերավարական պարտականութիւնների՝ այդ աւելորդ բեռն էլ ենք շատ հեռու շարտել և ինչ որ անում ենք, պատուում է միմիայն մեր անյագ և անզուսպ կրքերով լի անձի շուրջը: Բայց որովհետև դեռ յաճախ է լսում «ողորմութիւն արէք», «ողորմութիւն տուի», «ալքատասէր է», «ողորմած է» բառերը այս կամ այն անձի մասին, ուստի և կանգ կառնենք մեր ողորմածութեան, կարիքների և ձևերի վրայ:

Նախ՝ մենք սիրում ենք, որ մեր աղքատները շարունակ լինին կամ մեծ փողոցներում, կամ հրապարակներում, և կամ եկեղեցիների առաջ. երկրորդ՝ պահանջում ենք, որ մեր աղքատները կամ անգամաւոյժ լինին, կամ կոյր, կամ կաղ, կամ բորոտ, կամ հաշմանդամ և անօգնական, այլապէս չենք ուզում ընդունել, որ կայ և կարող են լինել բազմաթիւ դէպքեր, երբ առողջ մարդիկ ու կանայք աւելի ծանր կացութեան մէջն են և աւելի վտանգաւոր վայրկենի հասած՝ քան բոլոր հաշմանդամները, և մեր ժամանակին տուած խելացի օգնութիւնը կարող է փրկել մօրը զաւակների համար, ազատելով բարոյական մա-

հունից, երխտասարգին հասարակութեան համար և դըրանով փրկել նոյն հասարակութիւնը ապագայ՝ յակամայիցս աւագակ և մարդասպան դարձածից և այդ՝ ժամանակին օգնող և խնամող ձեռքի չըհանդիպելուց։

Մենք ողորմութիւն չենք տալիս, ոչ, մենք մեր տուածով ծաղրում ենք թշուառութիւնը և ծաղրում մեզ, մենք այնպիսի անքակտելի շաղախով ենք կպած մեր գոյքին, որ աւելի շուտ պատքաստ ենք կեանքից բաժանուելու՝ քան թէ մեր ունեցածից։ Երբ ենք մեր ողորմութիւն կոչուած կոպէկները չպրտում մուրացկաններին, որտեղ և ինչ չափով։

Պահանջում ենք, որ աղքատը դայ շաբաթ օրը, «աղքատը շաբաթ օրը կըգայ» առածը նոյն իսկ ժողովրդի բերանում դարձել է շատ սովորական, որ աղքատը ժամի դռանը կամ գերեզմանատանը կըլինի։

Մենք ինքներս երբէք չենք որոնում, երբէք չենք հետաքրքրւում, թէ ուրտեղ է ողորմութեան իսկական կարիքը։ Խիզճներս հանդարտեցնելու համար այդ էլ դրել ենք մի խումբ մարդկանց վրայ, անուանել նրանց բարեգործական կամ աղքատախնամ ընկերութիւն, այդ ընկերութիւններից ինքներս խռով ենք մնացել և կարծում ենք, որ այդ անունով ընկերութեան գոյութիւնը միանգամայն բաւական է թշուառութիւնը մեր կեանքից սնչացնելու և տանջուածների արցունքը սրբելու համար։

Խնչպէս ենք օգնում այդ ընկերութիւններին։

Հարիւր հազարուոր հարուստ քաղաքացիներից մի երեք տասնեակ մարդիկ ստանում են կէս բունի և կէս կամաւոր հինգ ռուբլի անդամավճարի տոմսեր մեծ դժգոհութեամբ, ի հարկէ այդ տոմսը իրաւունք է տալիս որոշ կոչման՝ «անդամ բարեգործական ընկերութեան», որոշ ընտրութիւնների մասնակցելու և ընտրուելու և հրապարակներում փառաբանուելու, դա մի տեսակ վարագուրում է մեր միւս գործերը և այլն և այլն։ Այդ խմբի ընտրուած մարդիկն էլ, որոնք արդէն վարչութիւն են կոչուում, պարտք են համարում որոշ ժամանակ տարեկան մի երկու ներ-

կայացում և պարահանդէս տարքել, բարեգործութեան գիմակի տակ ժողովում են հազարաւոր մարդկանց, բարեգործաբար զուարճացնում, զուարճանում, բարեգործաբար սլար ածում և այդ անբարեգործ եղանակով ժողովում կոպէկներով է կատարւում ողորմածութեան այն այլանդակութիւնը, որին մենք բարեգործութիւն անուն ենք տալիս։ Այո, այս է մեր՝ քրիստոնեաներիս հակաքրիստոնէական բարեգործութիւնը հրապարակներում, հանդիսասրահներում և այլն և բարեգործութեան — ողորմածութեան համար մեր տուածը մի միլիոներորդ մաս չի կազմում մեր միմիայն շռայլութեան, հարբեցութեան և շուայտութեան վրայ ծախսածներէ։ Օ՛, եթէ մենք կարողանայինք վիճակագրական տեղեկութիւններ կազմել և հրապարակի վրայ դնել, թէ ներկայ քրիստոնեայ մարդկութիւնը որքան է ծախսում անմեղ մարդկանց կործանելու և բարոյապէս ոչնչացնելու ու մեռցնելու վրայ և որքան է տալիս որպէս ողորմութիւն իրեն մեռցրածներին փրկելու, հասարակութեան պիտանի և պատուաբեր դարձնելու համար, հաւատացած ենք, որ շատ աննախանձելի պատկեր կըստացուէր։ Բացի այս ամօթալի կացութիւնից, մեզանում տարածուած է նաև բարեգործութիւն — ողորմածութիւն մահուանից յետոյ։ Կենդանութեան ժամանակ կեանքի գնով ժողոված հարստութեամբ չըգտնելով փափագած հանգիստն ու փառքը, չըկարողանալով յաւիտենական դարձնել իրենց կեանքն ու խրախճանը, մարդիկ մահուան անկողնում, կեանքի վերջին բուպէներին նոր զգում են իրենց պարտքը, զգում իրենց սխալը, շտապում են նոտար և քահանայ կանչել և կտակում են իրենց ունեցածը այն բոպէներին, երբ նրանք այլ ևս ոչ մի իրաւունք չունին այդ սեփականութեան վրայ, երբ նա պէտք է իսկապէս հասարակաց գառնար՝ որպէս տիրազուրկ գոյք։ Հարցրէք այդ տեսակ մեռնողներէց, թէ ինչ են լինելու իրենք մի քանի ժամից կամ օրերից յետոյ, ինչ իրաւունք ունին ամբարած հարստութեան վրայ, կամ ինչ կարող են վայելել իրենց գոյքից, հարցրէք,

թէ ինչո՞ւ է նա այդ բողոքներին յիշում՝ բարեգործութիւնը և նա անշուշտ կ'արտասուի, որ հարկադրուած է այդպէս անել, որովհետեւ մեռնում է, որովհետեւ ժամանակին օգտուել չի կարողացել, որ իրեն կարծել է անմահ։

Զարմանալի չէ, առողջը պէտք է պարի բարեգործութեան համար, իսկ հիւանդը դիակ դառնայ, այլապէս նրանք ողորմածութիւն տա՞ծ բանը յիշել չեն կարող, այլապէս նրանց աչքերը փակ են շրջապատողների թշուառութիւնը տեսնելու։ Սակայն այլ է քրիստոնէութեան պահանջը, այլ է առողջ բանականութեան և եսականութեան հիւանդութիւնից ազատ հոգու պահանջը. այն, նա առում է մեղ, որ իւրաքանչիւր գաղափարի ճշմարիտ զինուորութեան համար ոչ թէ միայն սեփականութիւնը, հարստութիւնը պէտք է զոհել, այլ և կեանքը, իսկ կեանքը գաղափարին զոհելու համար պէտք է սովսր լինել գոյքը, աշխատանքի արդիւնքը զոհելուն. — «Եթ Վաճառեան զամենայն զոր ունիս և տուր աղքատաց, և տու զխաչ իմ և եկ զինի իմ»։ ահա այս էր հարկաւոր մեծատուն երկտասարդին յաւիտենական կեանք ժառանգելու համար, նոյն բանն է մեղ հարկաւոր գաղափարի ճշմարիտ զինուորութեան համար, նոյն բանն է հարկաւոր արժանաւոր քրիստոնեայ լինելու համար։ Բայց մեր Փրկիչը մի ուրիշ պահանջ էլ էր միացնում՝ ողորմածութեան հետ, նա պահանջում էր, որ մեր ողորմութիւնը հրապարակական չը լինի, որ մարդկանց ցոյց տալու համար չանենք այդ բանը, որպէս զի Երկնաւոր Հօրից ընդունելիք վարձատրութիւնից չըղրկուենք։ Նա պահանջում էր, որ կեղծաւորների նման աղմուկ չըհանենք բարեգործութիւն անելիս մարդկանցից փառաբանուելու համար։ Նա պահանջում էր ողորմութիւն տալիս այնպէս տնել, որ աջ ձեռքի տուածը ձախը չիմանայ, որ մեր ողորմութիւնը ծածուկ լինի, և հայրն քո, որ տեսանէ ի ծածուկ, հատուցէ քեզ յայտնապէս» (Սւեա. Մատթէոսի 1—5) ասում էր Նա։

Եւ իրաւ, միմիայն Փրկիչի ցոյց տուած ողորմութեան ձեւը կարող է կոչուել համոզմունքից, հոգու խորքից և

սիրոյ ուժից ու գաղափարից առաջ եկած, այլապէս նա երբէք չի կարող մարդասիրութեան հետեանք լինել, երբէք, նա կըլինի հետեանք կամ փառասիրութեան և կամ պարասիրութեան:

Հայ եղբայր, հայ քրիստոնեայ եղբայր, ձմեռ է, միջմայրիկ վարակուած է աղքատութեան հիւանդութեամբ՝ — խօլերայով, ցուրտ և տանջանք անկարող և չքաւոր եղբայրներիդ համար: Մօտենում են քրիստոնէական ամենամեծ տօները, երբ քո մերձաւորներիդ համար մեծամեծ ծախսեր պէտք է անես: Արդեօք պէտք է սպասես, որ այդ աղքատները շարունակ եկեղեցիներիդ դռներին և հրապարակներում, արդեօք պէտք է Ռարեզորժական Ընկերութեան տոմսակի սպասես և դիմակահանդիսի կամ պարահանդիսի, արդեօք պէտք է միշտ հաշմանդամ լինի քեզանից ողորմութիւն խնդրողը և պէտք է կոպէկանոց ողորմութիւն տաս «եախէդ աղատելու համար», թէ պէտք է մտածես անձամբ օրօնել և զանել կարիքի բունը: Խեղացի ողորմութիւն պէտք է տաս և փրկես նրանց, որոնք անդունդի բերանին հասած՝ բարոյական և ֆիզիքական կործանումից պէտք է փրկուին ողորմութեամբ:

Դու, սիրելի եղբայր, դու Հայաստանեայց եկեղեցու պաշտօնէութեան և Աւետարանի սպասաւորութեան կոչուած քահանայ եղբայր, արդեօք փրկչական տօներին ծխերիդ այցելելիս պէտք է կարողանաս սփոփանք և մխիթարութիւն մտցնել զուտ Աւետարանի ոգով քո կարօտ ծխերիդ հարկի տակ Քրիստոսի Ծննդեան և Յայտնութեան աւետիքի հետ:

Դու, հայ ծերունի և մեծատուն, արդեօք դեռ էլի պէտք է հրեշտակապետի այցելութեան սպասես ողորմածութեան մասին մտածելու համար, թէ քաջութիւն պէտք է ունենաս մի քանի օր դոնէ իբրև ճշմարիտ քրիստոնեայ տարելու:

Դուք, հայ մայրեր, ինչպէս միշտ, այնպէս էլ այժմ միայն ձեզ, ձեր զաւակներին պճնելու հոգսով պէտք է սահմա-

նախակուիք, թէ պէտք է կարողանաք յիշել, որ կան մայրեր, որոնց մայրական սէրն ու գութը վտանգի մէջ է մեր հասարակական հակաքրիստոնէական կաղմակերպութեան շնորհիւ և կորստեան անգունդը լայն բացել է իւր բերանը նրանց էլ կլանելու միլիօնաւոր նմանների պէս:

Դ՛ուք, հայ երիտասարդներ, միմիայն ձեր զուարճութեան, կեր ու խումի, թղթախաղի և անքուն գիշերների մասին պէտք է մտածէք և դայթակղեցնող վատ օրինակ հանդիսանաք, թէ պէտք է աշխատէք փրկելու դեռ ևս պատանեկական հասակից կորստեան շաւղի վրայ ընկածներին և նրանց օգտակար մարդ պէտք է դարձնէք հասարակութեան համար:

Դ՛ուք, հայ օրիորդներ, դարձեալ պարերեկոյթներով պէտք է բարեգործ լինիք, ձեր պարով պէտք է բարեգործէք, ձեր արդ ու զարդի հոգսով ու ցուցահանդէս սարքելով պէտք է հանդիպէք, թէ պէտք է ընտրէք մարդասիրութեան պարգեւած անապական և աննման զարդն ու գանձը և առանց գանելու, առանց զգուելու պէտք է կարողանաք մտնել խաւարի և աղքատութեան նկուղները և սփոփանք լինել բաղձաթիւ թշուառ և աղքատութիւնից ու տգիտութիւնից տառապող փոքրահասակ հայ օրիորդներին: Աշխարհի և քո սիրած պաճուճանքն ու աղամանտները ոչ որի չեն լաւացրել, իսկ հաղարաւորներին կործանել են: Ժամանակ է, որ մենք աւելի գործնական լինինք, որ մեր քրիստոնէութիւնը գործով, աւետարանական գործով արտայայտենք և ոչ թէ լոկ բառերով մխիթարենք մեզ: «Եթէ սիրէք զիս՝ զպատուիրանս իմ՝ պահեա՛լիք» (Յովհ. Ժ. 15). «Զի եթէ սիրիցէք զայնսսիկ, որ սիրենն զձեզ, զինչ վարձք իցեն, ոչ ապաքէն և մաքսաւորք զնոյն գործեն. և եթէ տայցէք միայն ողջոյն բարեկամաց ձերոց, զինչ աւելի առնէք, ոչ ապաքէն մաքսաւորք և մեղաւորք զնայն գործեն» (Մատթէոս գլ. Ե. 46—48). Իսկ մենք միթէ պարսաւելի մաքսաւորներից դէթ մի քայլ առաջ ենք անցել: